ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 124

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԳԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.514ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գագիկ Վաղինակի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող 0.514 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-012-0001-0006, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արփի 2-րդ փողոց, թիվ 37, նախկինում տրված գ. Արփի 2-րդ փողոց 12/3 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 125

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.24629 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.24629 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0111-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ճանաչել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 126

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼԻՔ ՄԱՅԻՍԻ 9-Ի ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ/ԿԱՄ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 05.05.2021թվականի թիվ 061 որոշումը, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից Արենի համայնքի զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին և/կամ հարազատներին տրամադրել դրամական աջակցություն.

h/h	Զոհվածների ազգանուն, անուն, հայրանուն	Դրամական օգնության չափը /հազար ՀՀ դրամ/	Բնակավայր
1	Գասպարյան Ռուբեն Ավետիքի	50	Արենի
2	Խաչատրյան Կիմ Սիմոնի	50	Արենի
3	Սիմոնյան Զաքարա Հերոսի	50	Արենի
4	Սիմոնյան Գևորգ Հրայրի	50	Արենի
5	Բաղդասարյան Գալուստ Բախշիի	50	Արենի
6	Սարգսյան Նորայր Ձիվանի	50	Արենի
7	Գրիգորյան Մեհրաբ Հակոբի	50	Արենի
8	Միքայելյան Գագիկ Պեղատոսի	50	Արենի
9	Հակոբյան Արծրուն Մարատի	50	Արենի
10	Սիմոնյան Արմեն Վարազդատի	50	Արենի
11	Լևոնյան Կարեն Սամվելի	50	Արենի
12	Ոսկանյան Վարուժան Ժորժիկի	50	Արենի

13	Մաթևոսյան Վարդան Լևիկի	50	Արենի
14	Կարապետյան Վարդան Վոլոդյաի	50	Չիվա
15	Ավետիսյան Տիգրան Սմբատի	50	Չիվա
16	Ղևոնդյան Վասիլ Անուշավանի	50	Չիվա
17	Ավետիսյան Արսեն Ավետիսի	50	Ռինդ
18	անտոնյան Բայանդուր Վիտուշի	50	Ռինդ
19	Հարությունյան Լյովա Ռազմիկի	50	Ռինդ
20	Ավետիսյան Արմիկ ժորժիկի	50	Ռինդ
21	Հարությունյան Վահե Հրանտի	50	Ռինդ
22	Խաչատրյան արամ Սիրեկանի	50	Ռինդ
23	Կարապետյան Սիսակ Երվանդի	50	Ռինդ
24	Մնացականյան Նորայր Բենիկի	50	Ռինդ
25	Ավետիսյան Հրաչյա Սահակի	50	Ռինդ
26	Սարգսյան Գուրգեն Աղվանի	50	Ռինդ
27	Խանամիրյան Հունան Մարատի	50	Ռինդ
28	Միքայելյան Արծրուն Միշայի	50	Խաչիկ
29	Գևորգյան Գալուստ Հրանտի	50	Խաչիկ
30	Աբրահամյան Ալիկ Նորայրի	50	Խաչիկ
31	Պողոսյան էլիգում Անուշավանի	50	Խաչիկ
32	Միքայելյան Գրիգոր Նորիկի	50	Խաչիկ
33	Ներսիսյան Ալիկ էդվարդի	50	Խաչիկ
34	Բաղալյան Վարդան Բորիսի	50	Խաչիկ
35	Գրիգորյան Մեսրոպ Ռուբիկի	50	Խաչիկ
36	Աբրահամյան Թաթուլ Գագիկի	50	Խաչիկ
37	Ասատրյան Աբով Սողոմոնի	50	Խաչիկ
38	Միքայելյան Մարգարիտ Արտուշի	50	Խաչիկ
39	Ստեփանյան Արման Երվանդի	50	Ագարակաձոր
40	Խաչատրյան Յուրա Վլադիկի	50	Ագարակաձոր
41	Մարտիրոսյան Զոնիկ Վաղինակի	50	Ագարակաձոր
42	Մարտիրոսյան Կարեն Զոնիկի	50	Ագարակաձոր
43	Ֆարմանյան Ալեքսանդր Նաիրիի	50	Ագարակաձոր
44	Ալեքսանյան Վահե Վազգենի	50	Ագարակաձոր
45	Նազարյան Գրիշա Սամվելի	50	Ագարակաձոր
46	Ղարիբյան Արծվիկ Բալաբեկի	50	Ագարակաձոր
47	Գալստյան ժորա Վանոյի	50	Ագարակաձոր
48	Գրիգորյան Կարեն Հենրիկի	50	Արփի
49	Մարտիրոսյան Դմիտրի Վասիլի	50	Արփի
50	Հակոբյան Նարեկ Զավենի	50	Արփի
51	Գրիգորյան Գրիգոր Անդրիասի	50	Աղավնաձոր
52	Կարապետյան Կարեն Մովսեսի	50	Աղավնաձոր
53	Խաչատրյան Վահե Հրանտի	50	Աղավնաձոր
54	Խաչատրյան Հրայր Սուրիկի	50	Աղավնաձոր
55	Օհանյան Արամ Վաղինակի	50	Աղավնաձոր
56	Զաքարյան Արա Արշամի	50	Ելփին
57	Հարությունյան Լևոն Գուրգենի	50	Ելփին
58	Հայրապետյան Վաչագան Կարապետի	50	Ելփին
Ընդամենը		2 900	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 127

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11.09.2020Թ. ԹԻՎ 226 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Նորմատիվ իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի, Արենի համայնքի ղեկավարի 11.09.2020թ.-ի <<Արենի համայնքի Չիվա բնակավայրի բնակիչ Կարապետ Ալեքսանի Սարգսյանի կողմից փաստացի օգտագործվող 0.27611 հա բնակավայրերի նշանակության հողամասի սեփականության իրավունքի ճանաչման և հասցեավորման մասին>> թիվ 226 որոշման վերնագրում և տեքստի մեջ <<0.27611>> փոխարինել <<0.06921>> թվով,

2. Դադարեցնել որոշման 2-րդ կետի գործողությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 128

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16.04.2021Թ. ԹԻՎ 096 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց Ձորի մարզի, Արենի համայնքի ղեկավարի 16.04.2021թ.-ի <<Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասերը առանձին միավոր գրանցելու և հասցեավորելու մասին>> թիվ 096 որոշումը:

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասերը հասցեավորել.

2.1 0.13613 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0022, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 17 փողոց, 2 նրբ., թիվ 30:

2.2 0.12808 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0023, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 17 փողոց, 2 նրբ., թիվ 32:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 129

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱԳԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.514 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.27856 ՀԱ ԵՎ 0.23544 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գագիկ Հովսեփյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության (ծակագիրը՝ 10-012-0001-0006, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի բաժանման ընթացքում առաջացած 0,27856 հա և 0,23544 հա հողատարածքներին տալ հետևյալ հասցեները՝

ա) 0.27856 հա բնակավայրերի նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Արփի 2-րդ փողոց թիվ 37

բ) 0.23544 հա բնակավայրերի նշանակության հողամասը հասցեավորել Արենի համայնք, գ. Արփի 2-րդ փողոց թիվ 37/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 130

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.03.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 050 ՈՐՈՇՄԱՆ 8-ՐԴ ԿԵՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.50554ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Դադարեցնել Արենի համայնքի ղեկավարի 03.03.2021թվականի թիվ 050 որոշման 8-րդ կետի գործողությունը:

2. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.50554 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-012-0437-0008, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ պետական սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 131

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ՀՐԱՉԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ)կետի, 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 42-րդ հոդվածի, առաջին մասի 8-րդ կետերի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի վերջին պարբերության պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշումը Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Հայկ Հրաչիկի Ղազարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Արենի համայնքի տարածքում «Վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու» մշտական հանձնաժողովին՝ (նախագահ՝ աշխատակազմի քարտուղար Գևորգ Սիմոնյան) քաղաքացի Հայկ Ղազարյանին վարչական վարույթի գործի քննության համար սույն թվականի մայիսի 12-ին ժամը 10:00-ին հրավիրել Արենիի համայնքապետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 132

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Լիպարիտ Լևուշի Մինասյանին և Արևիկ Գեղամի Կարապետյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.10003 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0101- գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խոտհարք գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 133

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 21/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ՀՐԱՉԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը քննության առնելով 10 մայիսի 2021 թվականի Արենի համայնքի ղեկավարի թիվ 131 որոշմամբ հարուցված վարչական գործը այն է՝ Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 21/4 հասցեում գտնվող Հայկ Հրաչիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում առկա շինությունը վերակառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը պարզեց որ.

Հայկ Ղազարյանը (Բնակության հասցեն՝ Արենի համայնք, գ.Արփի, 1 Փ., 3 նրբ թիվ 4), Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան փողոց թիվ 21/4 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում, խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինություն (առկա շինության վերակառուցում), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման և կասեցման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի» 19.04.2021թ. թիվ 1 նիստի թիվ 1 արձանագրության հիման վրա 2021 թվականի մայիսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտների) վարչական պատասխանատվության ենթարկելու

նպատակով ստեղծված հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում, որին իրավախախտում թույլ տված քաղաքացին՝ Հայկ Ղազարյանը չէր ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական ղեկավար Գագիկ Հովսեփյանի բանավոր հայտարարության հիման վրա «Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և օրինականացման, կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի» կողմից Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 21/4 հասցեում գտնվող Հայկ Ղազարյանինին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 19.04.2021թ. թիվ 1 նիստի թիվ 1 արձանագրությունը:

2. Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտուներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով մշտական հանձնաժողովի 12.05.2021թվականի թիվ 1 նիստի 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, հաստատված եմ համարում հետևյալը՝

Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ.Արփի, 1փ. 3 նրբ. տ. 4 հասցեի բնակիչ Հայկ Ղազարյանի կողմից Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 21/4 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում, առանց համապատասխան թույլտվության, իրականացրել է առկա շինության վերակառուցման շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2021 թվականի մայիսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021թ. մայիսի 12-ին հրավիրվել է լսում, որին մանակցելու նպատակով վարչական վարույթ հարուցելու մասին Արենի համայնքի ղեկավարի որոշումը Արփի բնակավայրի վարչական ղեկավարի կողմից առձեռն հանձնվել է Հայկ Ղազարյանին:

Վերջինս, լինելով ծանուցված, վարչական վարույթի լսումներին չէր ներկայացել:

Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն քաղաքացին և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա.

Նույն օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով:

Տվյալ պարագայում Հայկ Հրաչիկի Ղազարյանը Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 21/4 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ իրականացրել է ապօրինի՝ ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին

կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածով 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և 23-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասի» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Հայկ Հրաչիկի Ղազարյանի նկատմամբ նշանակել տուգանք 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Արփի բնակավայրի Երևանյան խճուղի 21/4 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066
3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 5-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 11-րդ կետի պահանջը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների անցկացման տեղամասային կենտրոններ սահմանել՝

1) Ագարակաձոր բնակավայրի դպրոցի շենքը (Արենի համայնք, Ագարակաձոր բնակավայր, 1 փողոց, 17 շենք)

2) Աղավնաձոր բնակավայրի դպրոցի շենքը (Արենի համայնք, Աղավնաձոր բնակավայր, 3 փողոց, 33 շենք)

3) Արենի բնակավայրի մշակույթի տան շենքը (Արենի համայնք, Արենի բնակավայր, 3 փողոց, 16 շենք)

4) Արփի բնակավայրի դպրոցի շենքը (Արենի համայնք, Արփի բնակավայր, 1 փողոց, 21 շենք)

5) Գնիշիկ բնակավայրի Մոզրով գյուղի դպրոցի շենքը (Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր, Մոզրով գյուղ 1 փողոց, 2 շենք)

6) Ելփին բնակավայրի մշակույթի տան շենքը (Արենի համայնք, Ելփին բնակավայր, 1 փողոց, 2 փակուղի, 3 շենք)

7) Խաչիկ բնակավայրի մշակույթի տան շենքը (Արենի համայնք, Խաչիկ բնակավայր, Գյուղամիջյան հրապարակ, 2 շենք)

8) Չիվա բնակավայրի մշակույթի տան շենքը (Արենի համայնք, Չիվա բնակավայր, 2 փողոց, 4 նրբանցք, 2 շենք)

9) Ռինդ բնակավայրի մշակույթի տան շենքը (Արենի համայնք, Ռինդ բնակավայր, 2 փողոց, 3 շենք)

2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 135

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ևհիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 19-րդ կետի պահանջը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար Արենի համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճարտեղերը՝

1) Արենի համայնք, Ագարակաձոր բնակավայր, փողոց 1, շենք 3, 6 քմ.

2) Արենի համայնք, Աղավնաձոր բնակավայր, փողոց 2, շենք 1, 2 քմ.

3) Արենի համայնք, Արենի բնակավայր, փողոց 1, շենք 7, 1 քմ.

4) Արենի համայնք, Արենի բնակավայր, փողոց 3, շենք 26, 2 քմ.

5) Արենի համայնք, Արենի բնակավայր, փողոց 15, շենք 2, 1 քմ.

6) Արենի համայնք, Արփի բնակավայր, Երևանյան խճուղի, թիվ 51, 4 քմ.

7) Արենի համայնք, Արփի բնակավայր, փողոց 1, թիվ 11, 2 քմ.

8) Արենի համայնք, Արփի բնակավայր, փողոց 1, թիվ 17, 4 քմ.

9) Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր, Գնիշիկ գյուղ, փողոց 4, շենք 5, 3 քմ.

10) Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր, Մոզրով գյուղ, փողոց 1, շենք 11, 5 քմ.

11) Արենի համայնք, Գնիշիկ բնակավայր, Մոզրով գյուղ, փողոց 5, շենք 12, 5 քմ.

12) Արենի համայնք, Ելփին բնակավայր, փողոց 3, շենք 2, 4 քմ.

13) Արենի համայնք, Ելփին բնակավայր, փողոց 6, շենք 2, 4 քմ.

14) Արենի համայնք, Խաչիկ բնակավայր, փողոց կենտրոնական, շենք 2, 2 քմ.

15) Արենի համայնք, Չիվա բնակավայր, փողոց 1, շենք 5, 2.5քմ.

16) Արենի համայնք, Չիվա բնակավայր, փողոց 1/1, շենք 2, 2.5քմ.

17) Արենի համայնք, Չիվա բնակավայր, փողոց 3, շենք 3, 2.5քմ.

18) Արենի համայնք, Ռինդ բնակավայր, փողոց 13, շենք 1/1, 4 քմ.

19) Արենի համայնք, Ռինդ բնակավայր, փողոց 3, շենք 2/1, 3 քմ.

20) Արենի համայնք, Ռինդ բնակավայր, փողոց 4, շենք 5, 3 քմ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 136

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԳԱՐԻՏ ՀՐԱԶԱՆԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՄԵԽԱԿ ԱՐԹՈՒՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՇԻԿ ԱՐԹՈՒՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.0.313ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող Մարգարիտ Հրազանդի Կարապետյանին, Մեխակ Արթուրի Կարապետյանին և Սաշիկ Արթուրի Կարապետյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.313 հա բնակավայրերի նշանակության հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և բնակելի տունը վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Ելփին 27-րդ փողոց, թիվ 27, նախկինում տրված գ. Ելփին 27-րդ փողոց 13 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 137

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՅԻՍԻ 9-Ի ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ունենալով Արենի համայնքի ավագանու 05.05.2021թվականի թիվ 061 որոշումը, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ցուցակները՝ հաստատված վարչական ղեկավարների կողմից, Արենի համայնքի ղեկավարը **որոշում է՝**

Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից Արենի համայնքում մայիսի 9-ի տոնական միջոցառումների ժամանակ վարչական ղեկավարների կողմից կազմակերպված պաշտոնական ճաշկերույթի համար, վարչական ղեկավարներին հատկացնել 4000 ՀՀ դրամ գումար՝ մեկ անձի հաշվով.

h/h	Վարչական ղեկավարի անուն, ազգանուն, հայրանուն	Բնակավայրը	Ճաշկերույթին մասնակցած անձանց քանակը	Հատկացվելիք ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
1	Արամ Միքայելյան Լենդրուշի	Աղավնաձոր	52	208 000
2	Ռոման Բաղդասարյան Գալուստի	Արենի	50	200 000
3	Գագիկ Հովսեփյան Վաղինակի	Արփի	24	96 000
4	Հովիկ Սմբատյան Կնյազի	Խաչիկ	61	244 000
5	Սեդա Հարությունյան Ռազմիկի	Չիվա	37	148 000
6	Համազասպ Սիմոնյան Բիլալի	Ռինդ	27	108 000
Ընդամենը՝			251	1 004 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 138

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20.04.2021Թ. ԹԻՎ 103 ԵՎ 16.04.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 095 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի, Արենի համայնքի ղեկավարի 20.04.2021թ.-ի <<Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասեր առանձին միավոր գրանցելու մասին>> թիվ 103 որոշման տեքստի մեջ <<0.28194>> թիվը փոխարինել <<0.26194>> թվով

2. ՀՀ Վայոց Ձորի մարզի, Արենի համայնքի ղեկավարի 16.04.2021թ.-ի <<Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից համայնքի ավագանուն օտարելու առաջարկություն ներկայացնելու մասին>> թիվ 095 որոշման տեքստի 2.5 կետի մեջ <<0.12808>> թիվը փոխարինել <<0.12473>> թվով, իսկ <<0023>> թիվը փոխարինել <<0024>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**